# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար դատավորների պատմուճանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«24» օգոստոսի 2026թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

*Նիստից բացակայում էր հանձնաժողովի անդամ Տիգրան Ջեյնալյանը՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:*

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (20.08.2026թ.)՝ ժամը 12:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 21.08.2026թ.՝ ժամը 12:00-ին:

**Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքներիի գնման գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ սույն գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված է ապրանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գները՝

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Արտադրական հատուկ հագուստ (դատավորի պատմուճան) | 7 500 000 |
| 2 | Արտադրական հատուկ հագուստ (դատավորի պատմուճան) | 2 500 000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ | ՀՀ, Կոտայք, Առինջ, Վ. Նիկողոսյան 14 |
| ՆՈՐՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ | Շիրակի մարզ Ախուրյան Ջրաշինարարների բնվ.3փ., շ.1/4,2, |
| ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | Ք.Երևան, Դավիթ բեկի 180/26 |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

**6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Չ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | Տեքստիլ Գրուպ 111 ՍՊԸ | 7500000 | 20% | 9000000 | 4499000 | 20% | 5398800 | |
| 1 | ՆՈՐՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 6249700 | 20% | 7499640 | 5874000 | 20% | 7048800 | |
| 1 | ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | 9853200 | 20% | 11823840 | 9853200 | 20% | 11823840 | Մերժված |
| 2 | Տեքստիլ Գրուպ 111 ՍՊԸ | 2500000 | 20% | 3000000 | 1499000 | 20% | 1798800 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | ՆՈՐՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 2082700 | 20% | 2499240 | 1957000 | 20% | 2348400 | |
| 2 | ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ | 9853200 | 20% | 11823840 | 9853200 | 20% | 11823840 | Մերժված |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է, աճուրդն ամփոփվել է 21.08.2026թ.՝ ժամը 12:30-ին, և Համակարգի կողմից 1-ին և 2-րս չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է համարվել «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-ն:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

7. **Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ հրավեր) պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.**

«ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. **Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

8.1. «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1-ը, կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝ հնարավոր չէ դիտել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

8.2. «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝ հնարավոր չէ դիտել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

8.3. «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-ի կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Ելնելով վերոշարադրյալից՝ հանձնաժողովը որոշեց.**

Սույն նիստը կասեցնել. հաջորդ նիստը հրավիրել 2026թ. օգոստոսի 26-ին՝ ժամը 10:30-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ–ի հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով, ծանուցել հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի օգոստոսի 25-ը ներառյալ Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Նորայր Աղամալյան

Անդրանիկ Աբգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

Դատական դեպարտամենտի կարիքների համար դատավորների պատմուճանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«26» օգոստոսի 2026թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

*Նիստից բացակայում էր հանձնաժողովի անդամ Տիգրան Զեյնալյանը՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:*

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պայմանների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքների մասին.**

1.1. «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

1.2. Հանձնաժողովը որոշեց «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **Տեղեկատվություն՝ ընտրված մասնակցի և մերժված հայտերի վերաբերյալ.**

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

2.1.1. 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «ՏԵՔՍՏԻԼ ԳՐՈՒՊ 111» ՍՊԸ-ին:

2.1.2. 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Համակարգի կողմից մերժված չհամարված մյուս մասնակիցների հայտերը մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2.2. 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով այն մասնակիցների հայտերը, որոնց՝ աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, Համակարգի կողմից համարվել են մերժված:

**3. Հանձնաժողովը որոշեց.**

**Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

______________________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

______________________ Նորայր Աղամալյան

______________________ Անդրանիկ Աբգարյան

______________________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

______________________ Մարիամ Հայրապետյան